

ԿԱՐԾԻՔ

ԶԱՐՈՒՀԻ ՀՐԱՅՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ՁԻԱՆՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ» Ժ.02.02

«ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրանական բանասիրության ուսումնասիրության հիմնական առարկաների թվում առանձնահատուկ տեղ ունի պարսից լեզվի բառապաշարը, և վերջին երկու հարյուր տարիների ընթացքում այդ ուղղությամբ կատարվել է հսկայական աշխատանք, մասնավորապես հրատարակվել են պարսից լեզվի բառապաշարին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ, ստուգաբանական բառարաններ, քննվել են բառաշերտերը՝ ըստ պատմական ժամանակաշրջանների, դասակարգվել՝ ըստ բնիկ և փոխառյալ բառերի, հնաբանությունների և նորաբանությունների, սակայն այնպիսի մի աշխատանք, որում լեզվաբանական մանրակրկիտ քննության առարկա կդառնար պարսից լեզվի պատմության ուսումնասիրության տեսակետից էական պայմանական որևէ հասկացության նշանակիչների ամբողջությունը, կատարվեր դրա՝ ըստ ծագման և իմաստի դասակարգում, կոնտակտային լեզվում (տվյալ դեպքում՝ հայերենում) փոխառված բոլոր օրինակների ուսումնասիրություն, դարձվածաբանական վկայությունների վերհանում, չի արվել:

Ձարուհի Հրայրի Խաչատրյանի ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվել պարսկերենում վկայված ձևափոխությունները դասակարգել ըստ ենթաիմաստային խմբերի, առանձնացնել բնիկ իրանական շերտը փոխառյալներից, դասակարգել փոխառությունները՝ ըստ արաբականի և թյուրքականի, հավելվածների տեսքով առանձնացնել անվանացանկերը: Դա կարևոր է պարսից լեզվի բառապաշարի առանձին շերտերի (բուսանուններ, կենդանուններ, ամսանուններ ևն) պատմական քննության և լեզվական նյութի հիման վրա տարբեր մշակութային իրողությունների քննության համար:

Ատենախոսության շարադրանքում օգտագործված բազմալեզու գրականությունը, իրանական, հայկական և թյուրքական սկզբնաղբյուրների, այդ թվում և ուշ միջնադարյան շրջանի ձիամատյանների, բառարանների նյութի մանրամասն քննությունը ցույց է տալիս ատենախոսի մասնագիտական բարձր

պատրաստվածությունը և ընտրված թեմայի համապարփակ ուսումնասիրության հարցում հանդես բերած նախանձախնդրությունը:

Գովելի է հատկապես հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում վկայված, նաև հայոց բարբառներում արձանագրված իրանական ծագման ձևանունների ցանկի կազմումը և առանձին քննությունը, որոնք պակաս կարևոր չեն հայ-իրանական լեզվական առնչակցությունների ուսումնասիրությունների արդյունքները երկու ժողովուրդների պատմական-մշակութային և քաղաքակրթական հարաբերությունների նորովի քննության մեջ օգտագործելու տեսակետից:

Ատենախոսը կարողացել է հաջողությամբ համեմատության մեջ դնել և քննել ոչ միայն պարսից լեզվում և հարավարևմտյան ճյուղին պատկանող մյուս իրանական լեզուներում և բարբառներում, այլ նաև հյուսիսարևմտաիրանական, մասնավորապես մերձկասպյան տարածքի բարբառներում վկայված և արձանագրված ձևանունները:

Ատենախոսի կողմից կազմված և ատենախոսության վերջում հավելվածների տեսքով տրված անվանացանկները, որոնց թվում են պարսկերենում վկայված ձևանունները, հայերենում և հայոց բարբառներում վկայված իրանական, այդ թվում և պարսկերենում գրավոր վկայություն չունեցող ձևանունները, ըստ իմաստակառուցվածքային ձևի՝ նկարագրական ձևանունները պարսկերենում, «ձի» բառամիավորը իրանական լեզուներում, ինչպես նաև դասական պարսկերենով ստեղծագործած պարսից հեղինակների աշխատանքներում վկայված նկարագրական ձևանունների համեմատական ցանկը, ոչ միայն տալիս են ատենախոսության մեջ իմաստակառուցվածքային և ստուգաբանական քննության առարկա դարձած բառամիավորների ամբողջական պատկերը, այլ բացառիկ կիրառական նշանակություն ունեն թեմայի հետ առնչակից հետագա հետազոտությունների համար: Կարծում եմ՝ նշված անվանացանկերը պետք է հրատարակվեն և հասանելի լինեն հայ և իրանական բանասիրությամբ զբաղվող մասնագետներին:

Կատարված աշխատանքի վերաբերյալ, այնուամենայնիվ, կան մի քանի նկատառումներ.

1. Ատենախոսության «Ներածություն» բաժնում թեմայի հետ առնչություն ունեցող սկզբնաղբյուրների, բառարանների և որոշ գիտական ուսումնասիրությունների թվարկումից և դրանց՝ «ատենախոսության համար կարևոր աղբյուր է», «ձևանունների ուսումնասիրության համար նշանակություն է ունեցել», «ձևանունների հավաքման գործընթացում օգտակար է եղել», «ձևանունների ուսումնասիրության համար իրենց դերն ու նշանակությունն են ունեցել», «ատենախոսության համար բացառիկ դեր է ունեցել» և նմանատիպ այլ

արտահայտություններով գնահատումից զատ (8-18 էջեր) ցանկալի կլիներ տեսնել խնդրի ուսումնասիրության պատմության և արված աշխատանքների հանդեպ ատենախոսի քննական հայացքը:

2. Ատենախոսը հնի. *ekyos արմատին հանգող իրանական ձևերը նշելիս (էջ 38) հղում է անում Հավելված IV, աղ.1-ին և սպա տողատակում նշում աղբյուրը (*Hasandust M., Farhang-e tatbiqi mouzu'i-e zabānhā va gueshā-ye irāni-e now (Նոր իրանական լեզուների և բարբառների թեմատիկ համեմատական բառարան), Tehrān, 1389/2010, յ. I, s. 199*), որը պետք է կրկնել նաև էջ 185-ում, քանի որ հակառակ դեպքում ստացվում է, որ աղյուսակի հեղինակը ատենախոսն է և ոչ թե Ս. Հասանդուսը:
3. Թեև ատենախոսը նշել է, որ ատենախոսության մեջ «տրվել է թեմատիկ ողջ բառաշերտի իմաստային բնութագիրը, բազմաթիվ ձևանուններ առաջին անգամ ենթարկվել են նաև ստուգաբանական քննության» (էջ 7), սակայն «Եզրակացություններում», ցավոք, չի ներառվել որևէ դրույթ ոչ միայն այս ատենախոսության, այլև ընդհանրապես իրանական բանասիրության զարգացման արդի փուլի համար էական և կարևոր այդ արդյունքի մասին:
4. Հավելված 1-ում, 2-ում և 5-ում ներկայացված անվանացանկերը տեխնիկական առումով թերի են. բառ-միավորների դիմաց գրված չեն ատենախոսության այն էջերը, որոնցում քննվել են դրանք:
5. Որոշ անհարթություններ և իմաստային սխալներ կան շարադրանքում, ինչպես օր.՝ «երկու լեզուներում առանցքային դեր կատարող ձևանունների հետազոտությունը» (էջ 6), «Բառամիավորը հնդեվրոպական նախալեզվում վկայված է *ekyos ձևով...» (էջ 38), «հայերենի բացառական հոլովին համապատասխանող պարսկերենի az «-ից» նախդիր...» (էջ 41) և այլն:
6. Ատենախոսը ոչ բոլոր դեպքերում է հետևողական եղել իրանագիտական միջազգային տառադարձության կանոնների պահպանման հարցում. Միննույն [h] նշանով են դառադարձվել, օրինակ, պարսից լեզվի այբուբենի [ح] և [ه] տառերը, այն դեպքում երբ պետք էր օգտագործել համապատասխանաբար [h] և [h] նշանները (էջ 11, 38, 120): Նույնը վերաբերում է նաև [س] և [ص] տառերին. համապատասխանաբար [s] և [ʃ] - ի փոխարեն՝ օգտագործվել է միայն [s] նշանը (էջ 10, 117, 124):

Բերված նկատառումները, սակայն, բնավ չեն նսեմացնում ատենախոսության արժեքը:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ Ջարուհի Հրայրի Խաչատրյանի՝ «Ձիանունները պարսկերենում եվ հայերենում. համեմատական ուսումնասիրություն» հաջողված աշխատանք է, համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ուստիս հեղինակը արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

ԵՊՀ Իրանագիտության ամբիոնի ասիստենտ,
Բ.Գ.Թ. Արսյում Տոնոյան
Երևան, 29.01.2020թ.

Արսյում Մանուկյան պրոֆեսոր Խաչատրյան ԵՊՀ
ՅԳԿ թիմային քննություն d. Վ. Շահակյան

